ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 նոյեմբերի 2024թ. թիվ 902-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-Ի ԹԻՎ 188-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հաշվի առնելով կադրային փոփոխությունները՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի 2021 թվականի ապրիլի 9-ի «ՀՀ Լոռու մարզում հետպատվաստումային անբարեհաջող դեպքերը /ՀԱԴ/ վերլուծող մշտական գործող հանձնաժողով ստեղծելու և ՀՀ Լոռու մարզպետի 2020 թվականի հուլիսի 17-ի թիվ 541-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 188-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. նոյեմբերի 5
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2024թ. նոյեմբերի 5-ի
թիվ 902-Ա որոշման

Կ Ա Զ Մ
ՀԵՏՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ ԱՆԲԱՐԵՀԱՋՈՂ ԴԵՊՔԵՐԸ /ՀԱԴ/
ՎԵՐԼՈՒԾՈՂ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ռ.Պողոսյան - հանձնաժողովի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ
Մ.Ղազարյան - հանձնաժողովի քարտուղար, «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի մանկաբույժ, Գուգարքի տարածաշրջանի պատասխանատու մանկաբույժ

Հանձնաժողովի անդամներ.

Ի.Անտոնյան - Լոռու մարզի գլխավոր մանկաբույժ, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժիշկ անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ
Պ.Թորոսյան - «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի թերապևտ
Ն.Սուքիասյան - «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբույժ, Ստեփանավանի տարածաշրջանի պատասխանատու մանկաբույժ
Ն.Սարգսյան - «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբույժ, Սպիտակի տարածաշրջանի պատասխանատու մանկաբույժ
Ա.Ղալայան - «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբույժ, Թումանյանի տարածաշրջանի պատասխանատու մանկաբույժ
Ն.Պետրոսյան - «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբույժ, Տաշիրի տարածաշրջանի պատասխանատու մանկաբույժ
Ա.Հովհաննիսյան - ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Լոռի» մասնաճյուղի տնօրեն /համաձայնությամբ/
Ա.Մեհրաբյան - ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հյուսիսային տարածքային կենտրոնի հիգիենիկ, սանիտարահիգիենիկ հակամաճարակային վերահսկողության բաժնի ավագ մասնագետ

Լոռու մարզի գլխավոր մասնագետներ /ըստ անհրաժեշտության/:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
05/11/2024

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ. ԱՇՐԱՖՅԱՆ